

# **«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Զ Ը**

## **«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն օրենքի հավելվածի 15-րդ կետում «աջակցության » բառից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման մասնակցության (համակարգում է խաղաղ ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովման ուղղությամբ տնտեսության գորահավաքային նախապատրաստությունը և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության, ինչպես նաև ռազմական գործողությունների պայմաններում տնտեսության պատերազմական ժամանակաշրջանի փոխադրումն ու գործունեությունը) ապահովման» բառերը:

## **Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

**1.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**2.** Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում հաստատվում է Էկոնոմիկայի նախարարության նոր կանոնադրությունը և կատարվում է սույն օրենքի ընդունումից բխող այլ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ: